Հավելված N 2
ՀՀ կառավարության 2023 թվականի
ապրիլի 13-ի N 502-Ն որոշման

ԴԱՏԱՊԱՐՏՅԱԼԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՄԻԱՆՎԱԳ ԴՐԱՄԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՉԱՓՆ ՈՒ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ԿԱՐԳԸ

1. Պատժից ազատվելուց առնվազն 10 օր առաջ դատապարտյալին քրեակատարողական հիմնարկի պետի պատճառաբանված որոշման հիման վրա կարող է տրամադրվել միանվագ դրամական օգնություն, որի վճարումն իրականացվում է պատժից ազատելու օրվան նախորդող աշխատանքային օրը:

2. Քրեակատարողական հիմնարկի պետի պատճառաբանված որոշման համար փաստական հիմք է հանդիսանում քրեակատարողական ծառայության սոցիալական աշխատողի կողմից կատարված՝ դատապարտյալի անհատական կարիքների գնահատումը:

3. Սոցիալական աշխատողը դատապարտյալի անհատական կարիքների գնահատումն իրականացնելիս հաշվի է առնում դատապարտյալի գույքային դրությունը, ներառյալ՝ գույքային պարտավորությունները, դատապարտյալի մոտ եկամուտների առկայությունը կամ բացակայությունը, նրա անձնական հաշվին առկա գումարի չափը, դատապարտյալին ազատվելիս նրան դիմավորելու կամ չդիմավորելու հանգամանքը, բնակության վայրով ապահովված կամ չապահովված լինելը, ազատության պայմաններում նրա մոտ զբաղվածության առկայությունը կամ բացակայությունը, ինչպես նաև սոցիալական դեպքի վարման շրջանակներում էական նշանակություն ունեցող այլ հանգամանքներ:

4. Միանվագ դրամական օգնությունը տրամադրվում է անկանխիկ փոխանցման միջոցով՝ դատապարտյալի կողմից տրամադրված բանկային հաշվին:

5. Դատապարտյալին տրամադրվող միանվագ դրամական օգնությունը կազմում է 100.000 (հարյուր հազար) դրամ:

6. Սույն հավելվածի 5-րդ կետով նախատեսված միանվագ դրամական օգնության չափը կարող է ավելացվել ևս 50.000 (հիսուն հազար) դրամի չափով՝ հաշվի առնելով հետևյալ հանգամանքներից որևէ մեկը կամ դրանց համակցությունը՝

1) դատապարտյալի անաշխատունակ լինելը.

2) դատապարտյալի ընտանիքում երեխաների, տարեց կամ հաշմանդամություն ունեցող անձանց քանակը և տարիքը.

3) դատապարտյալի ընտանիքի բնակարանային պայմանները:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

13.04.2023
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ